ՀԱՅ ԹԱՏՐԵՐԳԱԿՆ ՅԻՏԱԼԻԱ

Պ. ԱՐՇԱԿ ԿՈՍՏԵԱՆԵԱՆ

ՅԱՋՄԱՎԻՊԻ անցեալ տարւոյ դեկտ. և ներկայիս յունիսի պրակներով արդէն ծանօթ է մեր ընթերցողաց իտալիոյ մէջ գտնուող ազգային թատրերգակաց վայելած համբաւն ու համակրանքն, և մանաւորապէս Ամիրջանեանի և Պ. Արշակ Կոստանեանի,

Վերջերս դարձեալ գովասանօք սկսան գրել իտալական օրագիրք Պ. Կոստանեանի վրայ, իրեն յանձնուած դերերը սքանչելի կերպով կատարելուն համար. մենք ևս չուզելով որ միայն իտալ մթնոլորտի և ժողովրդեան մէջ տարածուի և մնայ Կոստանեանի շնորհն, քաղուածոյ քանի մի օրագիրներէ կը դնեմք ի ստորև։

« Վերնաքամբն Կոստանեան հաւատարիմ արտայայտիչ հանդիսացաւ Կանիոյի (Canio). կ՚երգէ գեղեցիկ և ամենաքաղցրաստիճան ձայնով, յոյժ զգայուն և նազելի զգացմամբ »։ (Լրագիր Տրեվիսի)։

« Կամիլլա Ալբանի, Կոստանեան և Բորտոլամասի, երեք քաջ, ճիշդ և հանճարեղ թատրերգակներ, զարմանալի կերպով գերազանցեցին իրենց դերը » ։ (Հանդէս թատերական)։

« Երեկ երեկոյ ներկայ էինք Կեննետայի թատրոնին. օրիորդն Ալբանի Կամիլլա և Վերնաքամբն Կոստանեան Արշակ, բազում ծափահարութեան և գովասանաց արժանացան » ։ (Ադրիական)։

« Բորտոլամասի և Կոստանեան երեկ երեկոյ (20 սեպտեմ) մի մի պայծառ թատրերգակներ հանդիսացան։ Առաջինն երէց զԿարմին (Carmen) միւսն զՄիննիոն. երկուքն ալ արժանացան պարգևաց և ընծայից »։ (Հանդէս թատերական)։

« Ճարտար թատրերգակ մ՚է Արշակ Կոստանեան։ Ձայնն համակրելի, հոգւով կ՚երգէ. Կանիոյի դերին մէջ քաջ հանդիսացաւ և արժանանալով խուռն բազմութեան ծափահարութեան, բռնադատուեցաւ կրկնելու իւր դերը » ։ (Լրագիր Վենետկոյ)։

« Վերնաքամբն Պր. Արշակ Կոստանեան զարմանալի ձևով արտայայտեց դժուարին մասն Կանիոյ. քաջ դերասան է և զգայուն երգիչ » ։ (Հանդէս թատերական)։

Կոստանեան այս գովասանաց խօսքերն, այնպիսի ազգէ մի կը ստանայ, որուն ուղեղին մէջ ի մանկութենէ միշտ տպաւորուած է մեծ ներդաշնակութիւն մի յերգս, ուստի և յիրաւի այսպիսի ազգէ մի վերոյգրեալ գովասանաց խօսքերուն արժանի ըլլալն՝ աննարակոյս մեծ պարծանք է Կոստանեանի, և իւր ազգին... և հայրենեաց։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ, ՄՈՍԿՈՒԱ. Հանգուցեալ Պետական խորհրդական Դանիէլ Գաբրիէլեան Քանանեանի Բարձրագոյն հաստատուած մրցանակի նիւթը. « ՀԱՅԵՐԸ ԲԻՒԶԱՆԴԻԱՅՈՒՄ՝ ՄԻՆՉԵՒ ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՒԱՆՔԸ » (մանաւանդ բիւզանդական աղբիւրների հիման)։

Շարադրութիւնը կարող է ներկայացուել հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն կամ գերմաներէն։

digitised by A.R.A.R.@